ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Քաղաք Եղեգնաձոր 08 ապրիլի 2025թ.

Ժամը՝ 11:00

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանը:

Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Էլյա Սարգսյանը:

Մարզխորհրդի նիստին մասնակցում են

- ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալները
- ՀՀ Վայոց ձորի համայնքների ղեկավարներ
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդականներ
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը
- ՀՀ ուժային կառույցների տարածքային մարմինների ղեկավարները
- ՀՀ Տեսչական մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարները
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներ
- ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչներ

ՀՀ Վայոց ձորի մարզի խորհրդի 2025թվականի անդրանիկ նիստը սկսվեց ՀՀ օրհներգի հնչմամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նախագահ, մարզպետ Կոլյա Միքաելյանը ողջունեց ներկաներին, ապա նիստի օրակարգի հաստատումից հետո ձայնը փոխանցեց զեկուցողներին:

Օրակարգում՝

1.2024 թվականից տեղափոխված և 2025 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Արամ Կոստանյան

2.Վայոց ձորի մարզում գարնանային գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Գեղամ Մարգարյան

3.2025թ. 1-ին եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ Գվիտոն Դավթյան

4.Արենի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ:

Զեկուցող՝ Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար Գևորգ Սիմոնյան

5.2025 թվականի ընթացքում Վայք համայնքում իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ:

Զեկուցող՝ Վայք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Ավագյան

6.Եղեգնաձոր համայնքի համայնքային նշանակության մի շարք հարցերի վերաբերյալ

(6.1«Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի համար նոր շենքի կառուցումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ծրագրերում ընդգրկելու մասին,

6.2 Եղեգնաձոր քաղաքի Ն. Մշեցի 9/1 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքի խնդիրների վերաբերյալ,

6.3 Հանրապետական նշանակության Հ 48 ճանապարհի հիմնանորոգման խնդիրների վերաբերյալ,

6.4 Եղեգնաձոր քաղաքի Միկոյան 16 բնակելի շենքի խնդիրների (անվտանգության) վերաբերյալ):

Զեկուցող՝ Եղեգնաձոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Ավագյան

7.2025 թվականի առաջին եռամսյակում Ջերմուկ համայնքում իրականացված աշխատանքների և համայնքային նշանակության մի շարք խնդիրների վերաբերյալ

(7.1 2025 թվականի առաջին եռամսյակում Ջերմուկ համայնքի սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների և պլանավորված ծախսերի վերաբերյալ,

7.2Ընթացիկ տարվա սուբվենցիոն ծրագրերի և մասնակցային բյուջետավորման իրականացման ընթացքի վերաբերյալ,

7.3 Քաղաքաշինական և հողօգտագործման ոլորտում դիտարկված խնդիրների վերաբերյալ):

Զեկուցող՝ Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյան

8.2025 թվականի առաջին եռամսյակում Եղեգիս համայնքում իրականացված և ընթացիկ տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքների վերաբերյալ

(8.1 2025 թվականի 1-ին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ,

8.2 2025 թվականի ընթացքում Եղեգիս համայնքում կատարվող և կատարվելիք ծրագրերի վերաբերյալ,

8.3 Հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ):

Զեկուցող՝ Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ահարոն Գաբրիելյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Արամ Կոստանյանը օրակարգի 1-ին հարցի շրջանակներում ներկայացրեց տեղեկատվություն 2024 թվականից տեղափոխված և 2025 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ՝ միաժամանակ նշելով, որ 2024 թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի 14 ամբողջական փաթեթ՝ 2 մլրդ 531 մլն 057 հազ 896 ՀՀ դրամ արժողությամբ, **որից 925 մլն 180 հազ 644 ՀՀ դրամ կամ 36,55 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ 605 մլն 877 հազ 252ՀՀ դրամը կամ 63,45 % -ը՝ սուբվենցիայի գումարն է:**

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ծրագրերին ըստ համայնքների՝ նշելով նաև ծրագրերի ընդհանուր արժեքը և ընթացիկ ինչ փուլում են գտնվում:

Ստորև ներկայացվում են ծրագրերը:

Եղեգնաձոր համայնք

1. «Եղեգնաձոր համայնքի նոր քաղաքային գերեզմանոցի կառուցում»:
2. «Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում»:
3. «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատատում»:
4. «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի թիվ 2 և թիվ 5 մանկապարտեզների բակերի բարեկարգում»:
5. «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Մալիշկա, Գետափ, Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերի ոռոգման ցանցի վերակառուցում»:

Եղեգիս համայնք

1.«Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի խմելու ջրագծի կառուցում»:

2.«Եղեգիս համայնքի Քարագլուխ,Արտաբույնք, Գողթանիկ, Սալլի, Աղնջաձոր, Հորբատեղ, Հորս և Թառաթումբ բնակավայրերի ոռոգման առուների կառուցում»:

Վայք համայնք

1.«Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի ջրագծերի, գլխամասային կառույցների, արտաքին և ներքին ջրագծերի հիմնանորոգում:

2. «Վայք համայնքի Գոմք բնակավայրի 4-րդ և 5-րդ փողոցների, Զառիթափ բնակավայրի 3-րդ, 8-րդ, 12-րդ փողոցների, Եռաբլուրի անցուղու, 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի, Արտավան բնակավայրի 1-ին փողոցի Սարավան բնակավայրի 3-րդ, 5-րդ և 7-րդ փողոցների, Ազատեկ բնակավայրի 2-րդ փողոցի, Արին բնակավայրի 1-ին և 6-րդ փողոցների, Փոռ բնակավայրի 2-րդ, 3-րդ և 6-րդ փողոցների, Զեդեա բնակավայրի 3-րդ փողոցի, Հերհեր բնակավայրի 18-րդ փողոցի, Իսրայել Օրի փողոցի 165գծմ և Իսրայել Օրի 1-ին նրբանցքի 52գծմ հիմնանորոգում»:

3. «Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 3-րդ փողոցի հիմնանորոգում»:

Արենի համայնք

1.«Արենի համայնքի համար աղբատար մեքենայի ձեռքբերում»:

2.«Արենի համայնքի համար էքսկավատոր մեքենայի ձեռքբերում»:

3.«Արենի համայնքի Արենի բնակավայրի խմելու ջրի ֆիլտրող կառուցվածքի կառուցում, Արփի բնակավայրում «Ջրովանքի ձոր» տարածքում խմելու ջրագծի արտաքին ցանցի 500գծմ հատվածի հիմնանորոգում, Ելփին բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում, Չիվա բնակավայրում խմելու ջրի ՕԿՋ-ի և ներքին ցանցի կառուցում»:

4. «Արենի համայնքի Արփի բնակավայրում 940 գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցում»:

2024 ԹՎԱԿԱՆԻՑ 2025 ԹՎԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ

2024 թվականին ներկայացված ծրագրերից սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել է 10 **ծրագիր՝ 1 մլրդ 127 մլն 658 հազ ՀՀ դրամ** ընդհանուր արժեքով,

որից ՀՀ պետության մասնաբաժինը կազմում է **667 մլն 274 հազ 567 ՀՀ դրամ**, իսկ համայնքի մասնաբաժինը կազմում է **460 մլն 383 հազ 433 ՀՀ դրամ:**

2025 թվական տեղափոխվել են **6 ծրագիր և 2 ենթածրագիր**, որից Արենի համայնք՝ 1 ծրագիր և 2 ենթածրագիր, Եղեգիս համայնք՝ 2 ծրագիր, Ջերմուկ համայնք՝ 1 ծրագիր, Եղեգնաձոր համայնք՝ 1 ծրագիր,Վայք համայնք՝ 1 ծրագիր:

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔ

1. «Արենի համայնքի Արենի բնակավայրում մանկապարտեզ տանող 16-րդ և 17-րդ փողոցների կառուցում սալիկապատմամբ».
2. «Արենի համայնքի 1. Գնիշիկ բնակավայրում «Կարմիր քար» ջրագծի մասնակի նորոգում, 2. Խաչիկ բնակավայրում «40 աղբյուրներ» ջրաղբյուրի խմելու ջրատարի 3.0կմ ջրագծի, 3. Չիվա բնակավայրում «Բարսեղի աղբյուր» ջրաղբյուրի ջրագծի, 4. Չիվա բնակավայրում կոյուղու մաքրման կայանի կառուցում».

2.1. Գնիշիկ բնակավայրում «Կարմիր քար» ջրագծի մասնակի նորոգում.

2.2. Խաչիկ բնակավայրում «40 աղբյուրներ» ջրաղբյուրի խմելու ջրատարի 3.0կմ ջրագծի կառուցում.

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

1. «Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հերմոն բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում և Աղնջաձոր բնակավայրի ՕԿՋ-ի կառուցման աշխատանքներ».
2. «Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հորբատեղ, Հորս, Արտաբույնք, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգում».

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

1. «Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգում, Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում, Գնդեվազ գյուղի գերեզմանատում տանող աստիճանների կառուցում».

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

1. «Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Վարդան Զորավար փողոցի բարեկարգում և ասֆալտապատում».

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔ

1. «Վայք համայնքի Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի գյուղամիջյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ».

2023 թվականից տեղափոխված ծրագիր

«Արենի համայնքի Ելփին բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցում» Ա.Կոստանյանը ներկայացրեց նաև այդ ծրագրերի աշխատանքների կատարման ընթացքը, արժեքները , ավարտման ժամկետները և հավելյալ տվյալներ:

/ Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1.Սուբվենցիոն ծրագրեր կազմելիս բազմակողմանի գնահատել դրանց անհրաժեշտությունը, հստակ սահմանել առաջնահերթությունները:

2.Սահմանել ընթացիկ վերահսկողություն սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների որակի, տեղափոխման, ժամկետների երկարաձգման ուղղությամբ:

3.Բարձրացնել սուբվենցիոն ծրագրերի մասին հանրության լայն շրջանակների իրազեկվածության մակարդակը:

Օրակարգի երկրորդ հարցի շուրջ զեկուցեց Գեղամ Մարգարյանը՝ ներկայացնելով Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես 2025 թվականի ապրիլի 8-ի դրությամբ մարզում կատարված ցանքերը և պարարտանյութերի (ազոտական) ներկրումները՝ ըստ համայնքների: Այնուհետև ներկայացվեց ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356 - Լ որոշմամբ հաստատված բուսաբուծության աջակցության ծրագիրը, ըստ մշակաբույսերի՝ փոխհատուցումների սահմանաչափերը: Գ. Մարգարյանը ներկայացրեց նաև 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված անասնագլխաքանակը և համեմատությունը 2024 թվականի հետ, ինչպես նաև վարչության անմիջական վերահսկողությամբ անասնաբուժական ծառայությունների կողմից պետ. պատվերով իրականացված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների քանակը:Նախապատրաստական աշխատանքներ են տարվում սկսելու խոշոր եղջերավոր կենդանիների էմկար հիվանդության դեմ պատվաստումները:

Գեղամ Մարգարյանն անդրադարձավ նաև ոռոգման համակարգերի առկա վիճակին և խնդիրներին՝ ըստ համայնքների, նաև մի շարք բնակավայրերի՝ ներառելով համակարգի երկարության, շահառուների, սպասարկվող տարածքների, ոռոգման միջոցների / խողովակ, կիսախողովակ, հողաթմբային առու և այլն/ մասին տեղեկություններ: Զեկույցի ավարտին ներկայացվեց կլիմայի փոփոխություններով պայմանավորված մարդ-վայրի կենդանի ահագնացող կոնֆլիկտը մեղմելու համար «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» կողմից Եղեգիս համայնքի բնակավայրերում սկսնակ մեղվաբույծների համար իրականացված մեղվապահության վերաբերյալ երկօրյա դասընթացների վերաբերյալ տեղեկություններ:

/ Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1.Լայնորեն իրազեկել հնարավոր շահառուների շրջանում բուսաբուծության աջակցության ծրագրի /գյուղոլորտի աջակցության մյուս, այս թվում նաև գյուղապահովագրության ծրագրերի/ հնարավորությունների և առանձնահատկությունների մասին:

2.Ընթացիկ դիտարկել գարանանային ցանքերի, ազոտական պարարտանյութերի ձեռքբերման հարցերը:

3.Սահմանել պարբերական հսկողություն անասնաբուժական ծառայությունների կողմից պետպատվերով իրականացվող անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների նկատմամբ:

4.Ոռոգման սեզոնի մեկնարկով պայմանավորված՝ մշտական ուշադրության կենտրոնում պահել ոռոգման համակարգի խնդիրները՝ նվազագույնի հասցնելով դրանց ազդեցությունը գյուղատնտեսական աշխատանքերի կազմակերպման և արդյունավետության ապահովման վրա:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ Գվիտոն Դավթյանը՝ ներկայացնելով 2025 թվականի առաջին եռամսյակի համար ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքի մասին: Ըստ զեկույցի՝ 2025

թվականի մարտի 31-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով ընդամենը առաջին եռամսյակի համար եկամուտներ են նախատեսվել 912 միլիոն 422 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից 2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հավաքագրվել է 878 միլիոն 352 հազար ՀՀ դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 96.3%-ով, որից սեփական եկամուտներ նախատեսվել են 303 միլիոն 621 հազար ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 269 միլիոն 767 հազար ՀՀ դրամ կամ կատարվել է 88.8%-ով:

Այնուհետև Գ. Դավթյանը ներկայացրեց 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով նախատեսված պլանավորումները, փաստացի հավաքագրումները, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրած արդյունքները՝ ըստ հարկատեսակների:Գրեթե բոլոր հարկատեսակների գծով կա որոշակի աճ:

Համահարթեցման կարգով ՀՀ 2025թ.-ի առաջին եռամսյակի համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 595 միլիոն 378 հազար ՀՀ դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Այնուհետև Գ. Դավթյանը ներկայացրեց ըստ առանձին համայնքների 2025 թվականի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքը (առաջին եռամսյակի կտրվածքով):

/ Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1.Դիտարկել որոշ հարկատեսակների հավաքագրման առումով մեխանիզմների բարելավման ընթացքը:

2.Սահմանել ընթացիկ վերահսկողություն հավաքագրման ընթացքի նկատմամբ՝ ապահովելով բարձր ցուցանիշներ:

3.Քննարկել համայնքների համապատասխան աշխատակիցների հետ ոլորտի հետ կապված ընթացիկ հարցերը:

Օրակարգի հաջորդ հարցի՝ Արենի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ զեկուցեց Արենիի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար Գևորգ Սիմոնյանը: Ըստ զեկույցի՝ համայնքը 2024 թվականին

կամավոր կերպով միացել է մասնակցային բյուջետավորման ծրագրին՝ տրամադրելով 10 մլն. ՀՀ դրամ: 2024 թվականին ստացվել է 6 ծրագրային հայտ, որոնցից հաղթող են ճանաչվել 3-ը՝ Ելփինում պարի սենյակի վերանորոգում և կահավորում, Խաչիկում փառքի պուրակի բարեկարգում և Արփիում երիտասարդական կենտրոնի հարակից տարածքի բարեկարգում ծրագրերը:

Հաշվի առնելով 2024 թվականի հաջող փորձը՝ այս տարի ևս համայնքում իրականացվեց մասնակցային բյուջետավորման ծրագիրը, որի համար ՀՀ պետական բյուջեից համայնքին էր տրամադրվել մոտ 30մլն. ՀՀ դրամ, իսկ համայնքապետարանը ներդրել է մոտ 5 մլն. ՀՀ դրամ:

Ծրագիրը մեկնարկել է փետրվարի 10-ից, կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ համայնքի բոլոր բնակավայրերում, որոնց մասնակցել են տարբեր տարիքային խմբերի ավելի քան 300 քաղաքացիներ:

Իրազեկման հանդիպումներից հետո մինչև մարտի 7-ը ժամկետ է սահմանվել բնակավայրերից առաջարկների ընդունման համար, որի ժամանակ ներկայացվել է 17 հայտ:

Մարտի 7-ին նախապես ձևավորված հանձնաժողովի նիստում քննարկվել են առաջարկները և 5 առաջարկ սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով դուրս է մնացել ծրագրից, իսկ մյուս 12-ը անցել են քվեարկության փուլ, որը մեկնարկել է մարտի 10-ից և շարունակվել մինչև մարտի 27-ը:

Ընդհանուր առմամբ բոլոր ծրագրերը միասին վերցրած ստացել են 8638 քվե, իսկ հաղթող ծրագրեր են ճանաչվել Ռինդ բնակավայրում հանդամիջյան ճանապարհների բարեկարգում՝ (1632 քվե) և Արփի բնակավայրում զբոսայգու կառուցում (1610 քվե) ծրագրերը:

Մասնակցային բյուջետավորման համակարգը ավելի է հեշտացնում համայնքապետարանների գործը, քանի որ այս համակարգով որոշումների կայացումը ավելի մասնակցային է դառնում և ավելի թափանցիկ: Գ. Սիմոնյանի դիտարկմամբ՝ գործընթացում սակայն կան խնդիրներ: Օրինակ՝ նման ձևաչափի պայմաններում փոքր բնակչություն ունեցող բնակավայրերը գրեթե շանս չունեն հաղթելու, քանի որ յուրաքանչյուր բնակավայրի բնակիչ քվեարկում է իր

բնակավայրից ներկայացված ծրագրի օգտին: Անհրաժեշտ է մտածել ինչ-որ լրացուցիչ մեխանիզմներ նման դեպքերի բացառման համար:

Քաղաքացիների գրանցման համար անհրաժեշտ է լինում լրացնել և՛ ՀԾՀ, և՛ անձնագիր կամ նույնականացման քարտ, կամ ծննդյան վկայական, կարելի է բնակչի նույնականացումն իրականացնել միայն այս փաստաթղթերից միայն մեկով, որ ավելորդ փաստաթղթերի կարիք չլինի:

/Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1.Հանդես գալ համապատասխան առաջարկներով և հիմնավորումներով մասնակցային բյուջետավորման համակարգի՝ զեկույցում ներկայացված խնդիրների դիտարկման ուղղությամբ, մասնավորապես փոքր բնակչություն ունեցող բնակավայրերի հնարավորության ընդլայնման մեխանիզների մշակում,փաստաթղթային ընթացակարգի պարզեցում:

2. Դիտարկել մասնակցային բյուջետավորման գործընթացին մասնակցած, բայց հաղթող չճանաչված հայտերի առաջարկները սուբվենցիոն ծրագրերում ներառելու հնարավորությունները:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց Վայք համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Ավագյանը՝ անդրադառնալով երեք հիմնական ուղղությունների՝ սուբենցիոն ծրագրեր, դրամաշնորհային ծրագրեր, համայնքի կողմից իրականացվող ծրագրեր: Ըստ զեկույցի՝ 2024 թվականին հաստատվել և 2025 թվականին շարունակվում է «Սերս, Բարձրունի, Խնձորուտ, Նոր-Ազնաբերդ բնակավայրերի գյուղամիջյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ» սուբվենցիոն ծրագիրը, իսկ 2025 թվականին նախնական հաստատված և լրամշակման փուլում գտնվող սուբվենցիոն ծրագրերը են՝

1.«Վայք համայնքի Սարավան, Արին, Հերհեր, Ազատեկ, Զառիթափ, Զեդեա, Արտավան, Փոռ, Գոմք բնակավայրերի և Վայք քաղաքի Իսրայել Օրի փողոցների հիմնանորոգում»:

2.«Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի ջրագծի, գլխամասային կառույցների արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիր /2898 ԳԾ/Մ և 2 գլխամասային կառույց/:

3.«Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 3-րդ փողոցի ասֆալտապատում՝ 960 ԳԾ/Մ»:

2025 թվականին Վայք համայնքում իրականացվող դրամաշնորհային ծրագրերն են

1.«Խնձորուտ բնակավայրի խմելու ջրի արդիականացում՝ 1500 ԳԾ/Մ» ծրագրի շինարարական աշխատանքները կիրականացվեն 2025թ.-ին: Ծրագիրը իրականացնում է «Վարդանանց ասպետներ» հիմնադրամը և Վայքի համայնքապետարանը:

2. «Վայքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վերանորոգում ծրագիրը, որն իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրի շրջանակներում և Վայք համայնքի ֆինանսավորմամբ:

3.Ոռոգման ցանցի կառուցում Գոմք և Զառիթափ բնակավայրերում. դրամաշնորհը հաստատվել է: 2025 թվականին կիրականացվի նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները և կներկայացվի սուբվենցիոն հայտ, որից հետո 2026 թվականին ծրագիրը կիրականացվի:

4.«Բարձրունի բնակավայրում իրականացվում է ոռոգման ցանցի կառուցման» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագիրը իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի և Պարենի համաշխարհային հիմնադրամի կողմից հայտարարված դրամաշնորհի շրջանակներում: Ծրագիրը ժամանակավորապես դադարեցվել է՝ ելնելով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ժամանակավորապես սառեցմանը: Համայնքապետարանը շարունակում է ֆոնդահայթայթման գործընթացը ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները 2025 թվականին իրականացնելու համար:

5.Վայքի համայնքապետարանը դիմել է GIZ-ի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող Տեղական զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված

դրամաշնորհին՝ «Վայք համայնքի Գոմք բնակավայրում ոռոգման ներքին ցանցի կառուցում», «Վայք համայնքի գյուղական բնակավայրերում շարժական գրադարանի և ուսումնական կենտրոնի ստեղծում՝ կրթական ավտոբուսի ներդրմամբ» և « Համայնքում թափառող կենդանիների թվաքանակի կառավարում աղբահանության ծառայության բարելավման միջոցով» ծրագրերով: Ծրագրերը գտնվում են նախնական հաստատման փուլում:

2025 թվականին համայնքի կողմից իրականացվող ծրագրերը

1.ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք քաղաքի Ա. Թովմասյան փողոց 1 հասցեում գտնվող մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում՝ 10 600 000 ՀՀ դրամ:
2.Բարձրունի բնակավայրի խմելու ջրագծի՝ 150 ԳԾ/Մ հատվածի արդիականցում:
3.Արին բնակավայրի խմելու ջրագծի՝ 700 ԳԾ/Մ հատվածի արդիականցում:
4.Սարավան բնակավայրում խմելու ջրագծի՝ 2000 ԳԾ/Մ հատվածի արդիականացում:
5.Վայք համայնքի գյուղական բնակվայրերում լուսավորության համակարգի արդիականացում, մասնավորապես՝ Կարմրաշեն բնակավայրում լուսավորության համակարգի անցկացում:

/ Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1.Ծրագրերը իրականացնելիս գերակա համարել բնակիչների առաջնային խնդիրները:

2. Ծրագրերը կազմելիս հաշվի առնել տվյալ բնակավայրին բնորոշ խնդիրները և առաջնահերթությունները:

3.Սուբվենցիոն ծրագրերը իրականացնելիս բոլոր փուլերում խստորեն պահպանել օրենսդրության պահանջները:

Օրակարգի 6-րդ հարցի՝ Եղեգնաձոր համայնքի համայնքային նշանակության մի շարք հարցերի վերաբերյալ, զեկուցեց Եղեգնաձոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Ավագյանը՝ ներկայացնելով «Եղեգնաձոր համայնքի թիվ 1

մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի համար նոր շենքի կառուցումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ծրագրերում ընդգրկելու, Եղեգնաձոր քաղաքի Ն. Մշեցի 9/1 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքի, Հանրապետական նշանակության Հ 48 ճանապարհի հիմնանորոգման, Եղեգնաձոր քաղաքի Միկոյան 16 բնակելի շենքի խնդիրները:

Զեկույցի ընթաքում Վ. Ավագյանն անդրադարձավ նաև համայնքում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշներին, սուբվենցիոն ծրագրերով, համայնքային բյուջեով և համագործակցության արդյունքով կատարված/կատարվող ծրագրերին: Նա նշեց, որ Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզի շենքի վթարային լինելու պատճառով հաստատության գործունեությունը կկազմակերպվի այլ շենքում՝ Արսենյան 11 հասցեում գտնող շենքի նորոգումից հետո, սակայն հետագայում երեխաների քանակով պայմանավորված՝ հետագայում նոր ՆՈՒՀ շենքի խնդիր էլի կառաջանա, ուստի կարելի է այն ներառել որևէ պետական ծրագրում: Եղեգնաձոր քաղաքի Ն. Մշեցի 9/1 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքում ապրում են անապահով ընտանիքներ, սեյսմիկ առումով շենքը վտանգավոր է, մարդիկ ծանուցվել են այդ մասին, սակայն ապրելու այլ տեղ չունեն, ուստի հարկ է փոխել շենքի գործառական նշանակությունը, դառնա բնակելի կառույց, որպեսզի հնարավոր լինի տարբեր միջոցների/ անվտանգություն/ ներդրմամբ: Եղեգնաձոր քաղաքի Միկոյան 16 բնակելի շենքի խնդիրների առումով արդեն կատարվել է որոշակի աշխատանք, մասնավորապես անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է և ներկայացվել է ՀՀ Կառավարություն:

Առաջարկվեց՝

1. Եղեգնաձոր քաղաքի Ն.Մշեցի 9/1 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի շենքի առնչությամբ կազմակերպել անհրաժեշտ գործողություններ՝ բնակիչների անվտանգության հարցերը առաջնային համարելով:
2. Դիտարկել տարբերակներ «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի համար նոր շենքի կառուցումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ծրագրերում ընդգրկելու համար՝ միաժամանակ ապահովելով ՆՈՒՀ-ի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ

3. Հետևել Եղեգնաձոր քաղաքի Միկոյան 16 բնակելի շենքի խնդիրների լուծման ընթացքին:

Օրակարգի նախավերջին հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը՝ ներկայացնելով 2025 թվականի առաջին եռամսյակում Ջերմուկ համայնքի սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները և պլանավորված ծախսերը, ընթացիկ տարվա սուբվենցիոն ծրագրերը և մասնակցային բյուջետավորման իրականացման ընթացքը, քաղաքաշինական և հողօգտագործման ոլորտում դիտարկված խնդիրները:

Ըստ զեկույցի՝ 2025 թվականի 1-ին եռամսյակի դրությամբ համայնքի բյուջեի եկամտային մասը կազմել է 163.6 մլն դրամ, ծախսային մասը՝ 167.9 մլն դրամ: Վարչական բյուջեի եկամուտները հավաքագրվել են եռամսյակային պլանի նկատմամբ 82.6 %–ով, այդ թվում՝ հարկեր և տուրքեր – 52.2 %, այլ եկամուտներ – 84.5%, պաշտոնական տրասնֆերտներ – 93.8% ,սեփական եկամուտները ընդհանուր եկամուտների մեջ կազմում են 57.7%, իսկ հավաքագրումը կատարվել է 74.3%: Ֆոնդային բյուջեում եկամուտներ չեն եղել ոչ ֆինանսական ակտիվների իրացումից, ոչ էլ պաշտոնական տրանսֆերների տեսքով:

Սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից նախորդ տարվա ավարտին (2024 թ.-ի սեպտեմբերի 26) հաստատվելու պատճառով՝ 2025թ.-ին կիրականացվի «Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգում, Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում, Գնդեվազ գյուղի գերեզմանատուն տանող աստիճանների կառուցում» սուբվենցիայի ծրագիրը:

Ջերմուկ համայնքում 2025թ.-ի մասնակցային բյուջետավորման գործընթացի արդյունքում կիրականացվի 1 ծրագիր՝ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգումը՝ նախնական մոտ 36 միլիոն ՀՀ դրամ արժեքով (համայնք 20%, պետություն 80%):

Մասնավոր ներդրումներով իրականացվում է երկու առողջարանի մասնաշենքերի հիմնանորոգում և վերակառուցում, մեկնարկել են հանքային ջրի շշալցման նոր գործարանի կառուցման աշխատանքները:

Համագործակցությամբ իրականացվող ծրագրեր

1. «Հայաստանի սահմանամերձ համայնքերի դիմակայունության ամրապնդում և տնտեսական վերականգնում» ծրագրի շրջանակում, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հետ համագործակցությամբ, ընթացիկ տարում հանրակրթական 1 դպրոցի համար կկառուցվի 40 ԿՎՏԺ հզորությամբ արևային ֆ/վ կայան, 15 գյուղացիական տնտեսությունների կտրամադրվեն ինտենսիվ հատապտղային այգու հիմնման աջակցության, հացի 1 արտադրամասի համար կկառուցվի արևային ֆ/վ կայանի, կվերազինվի սարքավորումներով, Կեչուտ գյուղի նոր ոռոգման համակարգի կառուցման համար կտրամադրվեն խողովակները, իսկ աշխատանքները կիրականացվեն համայնքի բյուջեի միջոցների հաշվին:
2. «ԵՄ-ն հանուն երկխոսության. աջակցություն Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում հակամարտությունների փոխակերպմանը» ծրագրի շրջանակներում 2025թ.-ին համայնքային շինությունների վրա կտեղադրվեն ջրատաքացուցիչներ:

Այնուհետև զեկուցող Ա. Խաչատրյանն անդրադարձավ ՀՀ վարչապետի կողմից համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող հողերի օտարումների գործընթացների վերաբերյալ որոշ հարցերի պարզաբանումների անհրաժեշտությանը, համայնքի և «Հայանտառ» ՊՈԱԿ–ի հետ որոշ տարածքների պատկանելիության առնչությամբ տարաձայնության խնդրին, համայնքի տարածքում առկա ինքնակամ կառույցների հետագա ճակատագրի հարցին, դրանց օրենսդրական կարգավորումներին և առաջացած խնդիրներին:

/ Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1. Ծրագրեր իրականացնելիս, ի թիվս մի շարք կարևոր գործոնների, կարևորել զբոսաշրջային քաղաքի գրավչությունների ընդլայնման հնարավորությունները:
2. Ջերմուկ համայնքի և «Հայանտառ» ՊՈԱԿ–ի հետ որոշ տարածքների պատկանելիության առնչությամբ տարաձայնության խնդրի կապակցությամբ կատարել լրացուցիչ բազմակողմանի ուսումնասիրություն խնդրի լուծման տարբերակները գտնելու համար:

Օրակարգի վերջին հարցի շուրջ ելույթ ունեցավ Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ահարոն Գաբրիելյանը՝ ներկայացնելով 2025 թվականի առաջին եռամսյակում Եղեգիս համայնքում իրականացված և ընթացիկ տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքները, 2025 թվականի 1-ին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները, 2025 թվականի ընթացքում Եղեգիս համայնքում կատարվող և կատարվելիք ծրագրերը, հիմնադրամների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պատկերը:

Եկամտատեսակ	Նախատեսված /1-ին եռամսյակ/	Կատարողական /1-ին եռամսյակ/	Կատարման տոկոս
Գույքային հարկեր անշարժ գույքից	3250,0	1417,7	43.6
Գույքահարկ փոխադրամիջոցներից	9000,0	6225,1	69,2
Տեղական տուրքեր	250,0	331,4	132,6
համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալությունից եկամուտներ	2575,0	1907,6	74,1
Այլ եկամուտներ /Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	1500,0	835,2	55,7

Եղեգիս համայնքում 2025թ. կատարվող և կատարվելիք ծրագրերի մասին

2025թ. շարունակվելու են 2024թ սուբվենցիոն ծրագրերով հաստատված Շատին, Քարագլուխ, Աղնջաձոր բնակավայրերում խմելու ջրագծի և ՕԿՋ-ի կառուցման և Շատին, Քարագլուխ, Հորբատեղ, Հորս, Արտաբույնք, Թառաթումբ, Աղնջաձոր բնակավայրերում ոռոգման առուների վերանորոգման աշխատանքները:

2025թ. համար ևս ունենք հաստատված սուբվենցիոն ծրագրեր՝ Քարագլուխ բնակավայրում խմելու ջրագծի կառուցում, Քարագլուխ, Հորբատեղ, Հորս, Արտաբույնք, Թառաթումբ, Աղնջաձոր, Գողթանիկ, Սալլի բնակավայրերում ոռոգման առուների կառուցում:

Եղեգիս համայնքը մասնակցում է նաև մասնակցային բյուջետավորման գործընթացին և քվեարկության արդյունքում ունի հաղթած 2 ծրագիր, որի հիման վրա կազմվել է սուբվենցիոն հայտ և ներկայացվել լիազոր մարմին:

Եղեգիս համայնքը դրամաշնորհային մրցույթի մասնակցության հայտ է ներկայացրել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հայտարարած դրամաշնորհային մրցույթին:

Եղեգիս համայնքը համագործակցում է «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի» հետ, որի շրջանակներում կազմակերպվում են ձեռներեցության և մեղվաբուծության զարգացման դասընթացներ: Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել ծառատունկ համայնքի 2 բնակավայրերում:

Համայնքը համագործակցում է «Կայթ» կրթամշակութային հասարակական կազմակերպության հետ: Աշխատանքները նախապատրաստական փուլում են, նախատեսվում է համայնքում կազմակերպել տարբեր արհեստագործական խմբակներ, երգի, պարի խմբակներ:

Համայնքը համագործակցում է նաև «Կենարար» հիմնադրամի հետ: Համագործակցությունը դպրոցահասակ երեխաների և երիտասարդների շրջանում է: Կազմակերպվում են օնլայն դասընթացներ անվճար հիմունքներով:

/ Զեկույցը կցվում է/:

Առաջարկվեց՝

1.Տարբեր ծրագրեր իրականացնելիս հաշվի առնել բնակիչների շահերի առաջնահերթությունները:

2. Ծրագրեր իրականացնելիս դիտարկել Եղեգիս համայնքի զբոսաշրջային մեծ ներուժը:

3. Բարելավել սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը:

Զեկուցողներին ուղղվել են օրակարգային հարցերին և համայնքային նշանակություն ունեցող տարբեր խնդիրներին վերաբերող հարցեր, տրվել են պատասխաններ և պարզաբանումներ:

Քննարկումներում կարևորվել են խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների հետևողականությունը, ժամկետների պահպանումը, վերահսկողության մեխանիզմների կիրառումը, պատասխանատու տարբեր օղակների համագործակցված աշխատանքը:

Ամփոփելով ՀՀ Վայոց ձորի մարզի խորհրդի անդրանիկ նիստը՝ մարզի խորհրդի նախագահ, մարզպետ Կոլյա Միքաելյանը նշեց, որ կատարվել է մեծ ծավալի աշխատանք, բայց և՛ առանձին ոլորտներում, և՛ համայնքներում կան խնդիրներ, որոնք պետք է լուծել համատեղ ուժերով և միասնական մոտեցումներով, միաժամանակ ապահովել աշխատանքների շարունակականությունը և դրանց է՛լ ավելի բարելավումը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ **Կոլյա Միքաելյան**